

Հրապուրիչ կը թուի Ելամի առնթեր յաճախագոյնս յիշատակուած Բարախսի-Պարաչի երկրանուան մը՝ աշխարհագրական նմանահունչ, սակայն տարբեր անուան մը հետ համեմատուելը, որ նոյնպէս Ելամի կից կ'անուանուի Դարեհ արքայի Բեհիստունի մեծ արձանագրութեան մէջ¹³, այսինքն բարեւ. Parsu, հինգ. Pārsa, Ելամ. Parsin, ցարդ ծանօթ ամենահին ձեւը Պարսկաստանի կամ ճիշդ եւս Պարս, յն. Περσες, երբ. Pāras, անուան: Հետեւաբար միայն Pārsa կարող էր եղած ըլլալ հին Պարսից այս անուան տուած ձեւը: Եթէ ուղիղ է այս ենթադրութիւնը, այդ պարագային հին Բարախսի-Պարաչի անունը պիտի համապատասխանէ մերձաւորապէս այսօրուան Փարս կամ Փարսիստան նահանգին, որ Խոզդրատանի հարաւ-արեւելեան կողմը կը գտնուի. մինչդեռ այս վերջինս գրեթէ կը համապատասխանէ հին Ելամի: Եթէ կար Բարախսի անուն քաղաք մը, զայդ պիտի որոնէինք հաւանականագոյնս Պերսեպոլսոյ (Πέρσαι, Περσέπολις) տեղւոյն վրայ, որուն անունն իսկ ենթադրել կու տայ հնագոյն բնաշխարհիկ անուն մը — Parsu: Այս ենթադրութեան ի հարկէ տեղի պիտի չմնար, եթէ Parsu անունն՝ Ուրմիոյ լճին հարաւակողմը տարածուող Parsuaš, Parsua երկրանուան հետ զուգադրել ուղղութիւնը¹⁴: Այս ենթադրութեամբ հնար է թէ հին Պարսիկը միասին բերած ըլլան իրենց անունը: Այս երկրորդ հնարաւորութիւնը սակայն Հոռոզի նուազ հաւանական կը գտնէ¹⁵:

Նարամ-Սինի թշնամիներու ցանկին մետասաներորդ գծին վրայ կը յիշատակուի Արմանի, երկրի մը անունը:

Ma-da-ki-na ŠAR MÂT¹⁶ Ar-ma-ni, «Մագակինա, թագաւոր Արմանի քաղաքի երկրին»: Արմանի երկրին դէմ Նարամ-Սինի սարքած արշաւանքը նմանապէս յիշատակուած է արքայիս վաւերական արձանագրութեանց մէջ¹⁶: Նոր-ասորեստանեան

¹³ Տեսնել Weißbach, Keilinschr. d. Achaem. 10 եւ հետեւ:
¹⁴ Հմմտէ օր. հմբ. Thureau-Dangin, Huit. camp. de Sargon, p. IV, Nr. 5 եւ Schachermeyr-Ebert/ Realex. d. Vorgesch. X, 71f մէջ:
¹⁵ Հմմտել նաեւ E. Meyer ի թերթին Zeitschr. f. vgl. Spr. 42, p. 16, Nr. 1.
¹⁶ Տես Thureau-Dangin, Sumer. u. akkad. Königsinschriften, p. 166 d. եւ Rev. d'assy. X, 101, Nr. 1.

բնադիրը¹⁷, որ Սարգոն Ա. քաղաքի զինուորական արշաւանքները կը պատմէ, կը յիշատակէ Armani ընդ մէջ Lullubi եւ Akkad երկիրներու: Ըստ երեւութին, հարկ է դադարեցնել Բարեւաստանի հիւսիս-արեւելքը: Արմանի անունը Հոռոզի հաւանական կը գտնէ նոյնացնել Արման քաղաքին հետ, որ կը յիշուի Տիգրատ-Փարասար Ա. է եւ Սարմանասար Գ. է, եւ զոր պէտք է փնտնել Չագրոսի մէջ, Չէքէլ-Սամբրինի արեւելքակողմը¹⁸: Հոռոզի անհաւանական կը գտնէ Արմանի անունը նոյնացնել մեր Armenia (= Հայաստան) անուան հետ, որ դե'ռ իսկ բացատրուած չէ, կ'ըսէ, եւ որուն ամենահին ձեւն Armina է արձանեան արձանագրութեանց մէջ: —

Armani անուան մէջ ես կը միտիմ տեսնել Բեհիստունի արձանագրութեան Armina, Arminiya անունը, որուն ծագումն անյայտ կը մնայ տակաւին: Կիպերտի¹⁹ կարծիքով, այս անունը Մարեթ անցած է Պարսից, եւ այս վերջիններէս՝ Յունաց, որոնք Ἀρμενία անունով կը հասկնային Եփրատի արեւելքակողման երկիրը, Հայոց աշխարհը:

Բեհիստունի եռալեզուեան արձանագրութեան բարեւական թարգմանութեան մէջ, Պարսից Armina եւ Arminiya կոչած երկիրն Ուրաշտու ձեւով կը ներկայանայ, որ ծանօթ Ուրարտու երկրին ասորեստանեան անուանակոչութիւնն է — Ասորեստանցոց անծանօթ էր Armaniya բառը: Ասկէ հնար է եզրակացնել, որ Պարսիկը Armina (Arminiya կամ Armania) անունով յետոյ ո'չ միայն Չագրոսի լեռնակողմերն, այլ նաեւ դե'ռ աւելի անդին, դէպ արեւմուտք տարածուող երկիր մը կ'ըմբռնէին, պատմական Հայաստանի արեւելեան գաւառները մերձաւորապէս, ինչ որ ասորեստանեան Ուրարտու (Խալտեան սեպագրութեանց մէջ Բիաինա) անունէն եւս կը հաստատուի, որուն ծանրութեան կենդրոնը Վանայ լճին արեւելքակողմը կը գտնուէր:

Հետեւաբար, ինձ կը թուի, թէ Armani — ենթադրելով որ ուղիղ է այս ձեւը թերցումը հատեան բնագրին, — ո'չ թէ Arman քաղաքին անուան միայն՝ այլ նաեւ Armina կամ Arminiya (= Armenia) անուններուն հարկ է զուգադրել:

¹⁷ Keilinschrifttexte a. Assur versch. Inh. Nr. 92.
¹⁸ Հմմտէ Hommel, Ethn. u. Geogr. d. a. Orients, p. 295.
¹⁹ Kiepert, Alte Geogr. 75.

«Հնար է կարծել», կ'ըսէ Ենտէն²⁰, «թէ Armina միմիայն պարսկական անուանակոչութիւնն եղած ըլլայ, ուսկէ փոխ առած են նաեւ Յոյները, թէեւ այն համապատասխանած ըլլայ ընդի անուան երկրին: Սակայն որովհետեւ կա'ն ինչ ինչ արձանագրութիւններ, որոնք Arman կամ Ar-min անուն երկիր մը կը յիշատակեն, ինչպէս նաեւ Al-ma-an, ընդ մէջ Տիգրիսի եւ Չագրոս լեռներու, եւ կամ թերեւս լեռներու մէջ իսկ, դարձեալ որովհետեւ Շօշէ սկսելով Հայաստան առաջնորդող ճանապարհին վրայ կը գտնուէր այն երկիրն, ու այդ քաղաքէն մինչեւ Հիւս. Ասորիք միատոհմ ու միալեզու ժողովուրդ մը կը նստէր, անհնար չէ այս դիտէ առեալ ենթադրել, որ Պարսիկը այդ երկիրն՝ ինչպէս նաեւ Հայոց աշխարհին Armin անունը տուած ըլլան»:

Տ. Գ. ԳԱՐԱՍՊԵՂՅԱՆ

Ս Ե Ի Ա Ն Ա Յ Վ Ա Ն Ք Ը
 (Շառնակոթիւն):
 2.

Եկեղեցին իւր հոգեւորականութեան հետ երբեւ մի մեծ ճիւղաւորուած հիմնարկութիւն, որի ձեռքին կային պաշտօնապէս դարձուցները եւ եկեղեցական մեծաքանակ հաշիւները, հայ մտայինների ուշադրութիւնից չէր վրիպի հարկաւ, ուստի եւ թէ՛ եկեղեցու իւրատեսակ հասկացումը բարեկարգութեան խնդիրն են դնում, եւ թէ՛ բաւական խիստ, երբեմն անվայել ձեւով հայ հոգեւորականների քննադատում 70ական թուականներից սկսած, երբ ուսասայ կեանքում սկսում է մի նոր շրջան — մանր քաղաքացիական հասկացութիւնների շրջանը:

Այս պայքարը մանրամասնորէն նկարագրելու մէկ կողմ թողնելով, այստեղ յիշեմ այդ եռուն պայքարին մասնակցող հանգուցեալ Կարապետ Եպ. Տէր-Մկրտչեանի մի քանի գիտողութիւնները, որոնք բաւական են պատկերացնելու այդ շրջանի մտային-

ների պահանջները հոգեւորականներից, եւ հոգեւորականութեան այն վիճակը, որին հասել էր հասարակական ու քաղաքական հանգամանքների շնորհիւ ԺԹՐԴ դարու վերջին քառորդում:

«Հարկաւոր է մեզ քրիստոնէական կրօնը թէ ոչ. քսան տարի առաջ այդ մասին խօսք լինել չէր կարող. աղատամիտ մարդիկ քննադատում էին արդի եկեղեցական կեանքը եւ նրա մէջ բազմաթիւ թերութիւններ էին գտնում, ցոյց էին տալիս թերուներ ինչ գտնում, ցոյց էին տալիս թերութիւններ ամէն կողմ եւ պախարակում էին այն նպատակաւ, որ ուղղուին, եւ եկեղեցին կենդանանայ ու կենդանի ազդեցութիւն գործէ: Այսօր հանգամանքները բոլորովին փոխուել են. թերութիւններ ցոյց են տալիս, ոչ թէ ուղղելու համար, այլ որպէս զի սպառնացան, թէ եկեղեցին ինքն անպէտք ապացուցանեն, թէ եկեղեցին նրա մէջ է ու հնացած, եւ այն կրօնը, որ նրա մէջ քարոզում է, չի համապատասխանում այժմեան կեանքի պահանջներին, այլ երբեւ մի աւելորդ բեռ ծանրանում է նրա վրայ, ուստի եւ կրթութեան միջոցով պէտք է ժողովրդին ազատել այդ բեռից³⁰»:

Այն կրթութիւնը, որ պահանջում էին հոգեւորականներից՝ այդ շրջանի գործնական գիտելիքների գիտութիւնն էր. հոգեւորականը պիտի լինէր գիւղատնտես, բժիշկ, իրաւաբան, որ կարող լինէր գիւղացոց գործնական պահանջները կատարել. բայց Աւետարանին ծանօթ լինելը կարեւոր չէր համարում ամենեւին. անգամ վնասակար էր համարում³¹:

Հոգեւորականները դարձել էին այս շրջանում ըստ ամենայնի աշխարհիկ մտայինների քարոզներին հետեւող. հոգեւորականի կոչումն ըմբռնում էին բոլորովին տարբեր, քան եկեղեցու ոգին էր պահանջում, քան աւետարանական սկզբունքն էր թելադրում: Այդ գրութիւնն է նկարագրում Կ. Վ. ը «Արարատ»-ի 1895 Մարտի համարում «Հոգեւորական ասպարէզը» առաջնորդում հետեւեալ տողերով (երես 78). «Եթէ այսօր մեղանում կարելի է համարում հոգեւորական լինել առանց ամենատարրական ծանօթութիւններն ունենալու այդ կոչման դրած պարտաւորութիւնների

³⁰ «Արարատ» 1899, Մայիս, 187 եր.:
³¹ «Արարատ» 1901, Յուլիս-Օգ., 350 եր. տես նաեւ 1895—1901 «Արարատ»-ների Կ. Վ. ի յօդուածները:

²⁰ Jensen, Hittiter und Armenier, p. 14—15; Տաշեան, Ուսումն դասական Հայերէն լեզուի, 19:

ազատութեան եւ պահպանութեան: Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի լիցի ի վերայ ամենեցունդ. ամէն»:

Կոնդակից երեւում է, որ միաբանութեան կենցաղը վանականին վայել սահմաններում չէ, որ կան նրան մէջ սովորական մարդկանց համար իսկ անթոյլատրելի արարքներ, ուր մնաց անապատականներին, ուստի եւ վանահայր Սարգիս Վ.ը 96 թուին մի հրահանգ է ուղղում միաբաններին կենցաղի վերաբերեալ: Վանահայրն արգելում է ծեծը, հայհոյանքը, կռիւը, օտարականի առաջ անզգոյշ երեւալը: Եթէ մէկի իրաւունքը բռնաբարւում է կամ մէկին անպատուում է, պէտք է գնայ վանհօրը, յայտնէ իւր տրտուեցը եւ բաւարարութիւն ստանայ: Վանահօր մօտ դանուող առանձին մատենում պիտի արձանագրուի եկեղեցի եկողի եւ չեկողի անունը, կուտարարների եւ համբերողների անունը, վանական կարգերին հնազանդողները եւ չհնազանդողները եւ հաւատարիմներին ու անհաւատարիմներին, որպէս զի մանրամասն հաշիւ կադմուի, թէ ո՞վ դրանցից տարուայ մէջ քանի՞ անգամ եղբայրներին ծեծել է, հայհոյել է, կռիւ է արել, անհնազանդ ու անհաւատարիմ է եղել. ով, քանի՞ անգամ տնտեսից կերակրի նիւթ է ստացել: Այդ ամէնը տարուայ վերջը միաբանութեան առաջ կը կարդացուի, որ բոլորն էլ իմանան:

Այս հրահանգից պարզ երեւում է, թէ ի՞նչ վիճակ ունէր միաբանութիւնը. ի՞նչ դրաղմունք, վարք ու բարք: Ահա ժԹ. դարու վերջի ծեծող, հայհոյող, անհաւատարիմ միաբանը, որը շատ էր հեռացել ժԹ. դարու սկզբի հրեշտակական, բարի հեզ միաբանից: Տգէտ, սնտիապաշտ էին միաբանները, ու կզգու մենութեան մէջ պարպութիւնից ստիպուած անհատական մանր մանր գծուծ հաշիւների մէջ խճուղելով իրար թշնամանում են. ոգևով սնանկանում, ստամոքսի պաշտամունքին նուիրում. մինչեւ իսկ իրենց համար ձեւի, անշունչ եւ անկենդան ծէսի փոխուած ժամ գնալու մէջ իսկ թերանում են, ծուլանում:

Նման վիճակ ունէր եւ Սեւանի շրջապատի ժողովուրդը, գլխավորապէս Ծաղկաձորի եւ Գեղարքունեաց շրջանի, որուն համար Մկրտիչ Ա.ը յատուկ կոնդակ է տալիս³⁶, որ Սեւան եկող ուխտաւորները

ոչ թէ յիրաւի ուխտի են գալիս, երկրպագութեան սուրբ տեղին ու նշանին հոգեւոր մխիթարութեան, այլ «առաւել վասն մարմնաւոր զուարճութեան»: Ուխտաւորները ծանրանում էին վանքի վրայ, պղնձեղէն, վառելիք, լոյս եւ այլ յարմարութիւններ պահանջելով: Այդ բաւական չէր, նրանք շինութեան այս ու այն մասերը փլցնում են, նորակառույց դպրոցի յատակի վրայ կրակ էին վառում. ոչխար մորթում սենեկում ու ապականում: Ուստի եւ կաթողիկոսը յորդորում է լինել վայելուչ, պատկառող, խնամքով վարուել վանքի սեփականութեան հետ:

Ժողովուրդը՝ ինչպէս վերը նկարագրեցի, այլեւս դէպի կրօնը ու եկեղեցին դարձել էր անտարբեր եւ աւելի շուտ թշնամական վերաբերմունք ունէր: Բնականաբար չկար պատկառանք, յարգանք ու նուիրաբերութիւն այնպէս, ինչպէս այդ կաթԹ. դարու սկզբում: Միաբանութիւնը ժողովուրդին հաւասար դրութեան մէջ էր եւ ոչ բարձր. բնականաբար բարոյական կրօնական ազդեցութիւն չունէր:

Տգէտ միաբանների թիւը պակսեցնելու, միաբանութեան վիճակը բարելաւելու համար հարկաւոր էր համարուել ժամանակի պահանջների համաձայն Սեւանում եւս մի դպրոց բանալ եւ կրթել միաբաններին: Քանի որ քահանայական խնդիրը այդ ժամանակներում հրատապ էր եւ ընծայարան (քահանայացուներ պատրաստելու դպրոց) բանալու կարիքն էր շեշտուած, Մկրտիչ Ա. կաթողիկոսը ձեռնարկեց մի ընծայարան բանալու Սեւանում, որտեղ թէ՛ Սեւանի միաբանները կարող կը լինէին կրթուել, թէ՛ դրսից եկած զեղական քահանայացուները պատրաստել:

Առաջին անգամ չէր Սեւանում դպրոց բանալու ձեռնարկութիւնը: Դեռ 1869ին Մեսրոպ Վ. Սմբատեանը՝ երբ փոխ թեմակալ էր Երեւանի եւ Սեւանի մենաստանը մտել էր իւր իշխանութեան տակ ու ծանօթացել էր մենաստանի միաբանների գիտութեան շափին, որ տգէտ են, դիմել էր Գէորգ Դ.ին եւ խնդրել թոյլ տալ բանալ Սեւանում վանական դպրոց: Կաթողիկոսը իրրեւ ուսումնասէր հայրապետ թոյլ է տալիս եւ սինդը 1869 թ. Սեպտ. 18ին հրահանգում է բանալ դպրոցը: Բացում է արգեօք դպրոցը, թէ ոչ. ի՞նչ ծրագիր է լինում, ո՞վքեր են դասաւանդում եւ ի՞նչ

արդիւնք է ունենում: Անապատի դիւանից չի երեւում ոչ ինչ: Ըստ երեւոյթին եթէ բացուած էլ է, երկարատեւ չի լինում նրա գոյութիւնը ու միաբանութեան կեանքում կարեւոր դեր չի խաղում: Յետագայ տարիները կեանքը ցոյց է տալիս, որ միաբանները նոյն վիճակն են ունեցել, ինչ որ կար, նոր սերունդ չի երեւում միաբանութեան մէջ, չկայ հնի եւ նորի ընդհարման խնդիր: Անապատը անշարժութեան է մատնուած իր ներքին կեանքով:

Չարաբաղցի Աւետիս Դուկասեանի ծախքով շինուած է Սարգիս Վ.ի վանահայրութեան օրօք 1897—1898 թուերին մի յարկանի ընծայարան: Մի չէնք որի նմանը Սեւանի անապատը չէր տեսել. շինուած ընդարձակ լուսամուտներով, բարձր, լուսաւոր սենեակներով, ներկած պատերով, մի խօսքով մի վայելուչ չէնք: Այս չէնքը առիթ է դառնում, որ միաբանները այնուհետեւ պահանջ դնեն աւելի լաւ խցերի, քան իրենց նեղիկ, մութ, խոնաւ խցերն էին. եւ վանահայր Սարգիս Վ.ի անխոնջ աշխատութեամբ ու հսկողութեամբ շինարարական մի ընդարձակ գործ է սկսում Սեւանում որը տեսում է 15 տարի, մինչեւ 1907 թիւը. Հեղեղեմի մենաստանում շինուած են նորանոր չէնքեր, այնպէս որ այժմեան այցելուն կը տեսնէ միայն նրա վանահայրութեան օրօք շինուած չէնքեր: Բացի վանքերի չէնքեց շինուած չէնքեր: Բացի վանքերի չէնքեց մնացածները նոր են եւ աւելի յարմարաւորապէս ասած՝ «նոր, մոտերն» միաբանների ճաշակին յարմար: 1900—1901ին շինուած է վանահօր կացարանը Մովսէս Բարսեղեանի ծախքով: 1899—1910 հիւրանոցը, մատանը, մի խումբ Բալուցիները նուէրներով: 1903ին Ս. Աստուածածին եկեղեցու դանդակատունը: 1907ին ուխտաւորների եւ միաբանների կացարանները: Այս վերջինները առաւելապէս վանքի, մասամբ մի քանի մասնաւոր անհատների միջոցներով:

Բոլոր չէնքերի վրայ կար կնիք, նոր կուլտուրական շրջանի, դէպի փափկակեցութիւնը, հանգիստ կեանքը ու որոշ չափով անձնական բաւականութիւնը: Այս վանքերին նայողը եւ համեմատողը հին խցերի մնացորդների հետ, որոնք կղզու վրայ կան, պարզ տեսնում է հայ մտքի, հայ մարդու, նրա հետ եւ հայ վանականի փոփոխութիւնը, որ մի տարւայ ընթացքում տեղի ունեցաւ ուստահայ հատուածում:

Կրօնական կեանքի անկում, տնտեսական զարգացում ու պաշտամունք, մանր բուրժուական-քաղցրեղի մտայնութիւն, եւ նոյն ոգով շաղախուած դրականութիւն եւ աշխարհայեացք, ինչպէս ամէն տեղ, այնպէս էլ հայ եկեղեցում:

Ոչ ընծայարանը, որ մի երկու երեք տարի միայն գործեց, ոչ վանահօր եռանդուն շինարարական աշխատանքը, ոչ նոր չէնքերը ու յարմարութիւնները չկարողացան Սեւանի մենաստանի միաբանութիւնը փերածննդեան դրդել: Այդ միջոցները կիսատ էին ու մանաւանդ անզօր պատմական-հասարակական շարժման համեմատութեամբ: Հասարակական աշխարհում ազանուէր, քաղաքական աշխարհում, տաղրական շարժումներ արժատանում, տնտեսական կեանքը դէպի արդիւնաբերութիւն էր գնում: Այսքան ուժեղ հորութիւն էր գնում: Այսքան ընծայարանները հակեալ հայ խեղճ ընծայարաններին անզօր էին, եւ րանը, քարոզն ու գիրքը անզօր էին, եւ Սեւանայ անապատը մէկն էր այն բաղձաթիւ երեւոյթներից, որոնք դատապարծանօթանալով այս ու այն գիտութեան տուն, եայնների հետ շփոթուեց, դարձաւ երերուն, անկայուն, նա այլ եւս անապատական չէր. եւ ոչ էլ անապատի կարգը ըմբռնող: Այդ վիճակն ի նկատի ունենալով Խրիմեան կաթողիկոսը 1901ին կարծես իրր վերջարան Սեւանի ժԹ. դարու պատմական յեղաշրջման՝ անապատից վանքի վերածուիլը եւ այն էլ շատ աշխարհիկ կարգերով ապրող միաբանութեան տուեց հետեւեալ կոնդակը, որով անապատի միակ մնացորդը, ժԹ. դարու ժամերգութիւնը կրճատուեց եւ Սեւան իրր անապատ վերջացաւ քաներորդ դարու սկզբին:

Կոնդակը տրուած է 1901, Յունուար 1ին Թ. 1 Սեւանում: «Հոգեշնորհ վանահօր վանաց Սեւանայ Տ. Սարգիս վարդապետի եւ համայն աղօթարար միաբանական հարց եւ եղբարց ողջունել յայտ առնեմք»:

«Ոչ միայն ինձ, այլ եւ համայն ազգին եւ ժողովրդեան փափազն այն է, որ ոչ միայն աղօթարար միաբանք ըստ հնաւանդ սովորութեան տիւ եւ դիչեր երկարապաշտօն տքնութեամբ պարապեսցին, այլ եւ

³⁶ 1903 թ. Յուլիս 10 թ. 822:

եկեղեցական ուսմամբ եւ աստուածային գրոց հմտութեամբ եւ աղագային կարեւոր պատմութեամբ զարգանան եւ բարդաւածին առ ի շինութիւն ոչ միայն անձանց իւրեանց, այլ եւ ի շինութիւն ներկայ դարուս տառապեալ եւ քայքայեալ աղգիս համար: Սորա համար բարեպաշտ եւ ուսումնասէր Աւետիս Ղուկասեան սոյն կղզւոյն մէջ կառոյց մի հոյակապ ընծայարան, որպէս զի անմխիթար զիւղական ժողովուրդին համար շնորհալի եւ ուսեալ քահանաներ պատրաստուին: Բայց Սեւանայ վանաց ժամակարգութեան կարգն այնքան ընդարձակ է, որ չի թողուր ժառանգաւոր աշակերտաց ուսման պարապել: Եւ որովհետեւ Սեւանայ վանուց այժմեան միաբանական դասն յոյժ նուազած է, սորա համար ուսման աշակերտող տիրացուք պարտաւորեալ են սաղմոսերգութեան կարգ վարել, որով կարճի յոյժ ժամանակ ուսման եւ թերաւարժ մնալով չկարեն արժանապէս քահանայական սուրբ կոչումն ընդունիլ, որով լինին պատճառ այնչափ քննադատական մեղադրանաց, եւ դիտէ՞ք, զո՞վ դնեն պատճառ վանն տգիտութեան քահանայից — աղգին, Հայրապետը, թեմական առաջնորդները եւ մանաւանդ վանահայրերը. յորոց շատք իրենց բուն պաշտօն թողած միայն ագարակապետութեան պաշտօն վարեն չար մշակ լինելով նիւթական պիտոյից համար: Ահա այս ամէն զիս պարտաւոր կացուցանեն բարեփոխել ժամակարգութեան պաշտօնն Սեւանայ վանաց:

Ա. Հինգ կանոն Սաղմոսն զեղչել երեք կանոն, զոր պաշտել եւ սաղմոսել պէտք է մի կանոն առաւօտեան կանոնագլխէն առաջ եւ մի կանոն ճաշու ժամէն առաջ եւ ճաշու ժամն առանց մեծ քարոզից եւ աղօթից, որ պաշտի միայն ի մեծի պահոց:

Բ. Հարցի շարականները ըստ հին սովորութեան չկրկնել երեք անգամ, այլ մի միայն մի անգամ:

Գ. Փոխեր մինչեւ վերջին տուն չասել, այլ երկու եւ երեք տուն ասելէն յետոյ սկսել պատշաճի շարական:

Դ. Արեւագալի ժամերգութիւն միայն մեծ պահոց պաշտել:

Ե. Պահոց օրեր խաղաղական ժամ պէտք է անփոփոխ մնայ ըստ կարգին:

Զ. Նոյնպէս զեղերագահու Եկեղեցին պէտք է մնայ:

Այս չափս բաւ համարիմ եկեղեցւոյ ժամակարգութեան մասին, զոր սահմանեալ են երանելի նախնիքն մեր եւ զոր ցուցանէ մեզ տօնացոյցին կարգ, որում հետեւին ամենայն եկեղեցիքս Հայաստանեայցս եւ վաւերական համարեալ են ի բազում դարուց անտի եւ անփոփոխ մնացեալ հասեալ ի մեզ ժամանակս:

Այս այսպէս յորդորելով Հայրապետական կոնդակաւ պարտաւոր կացուցանեմ նախ բարեկարգութեան նախանձաւոր Տ. Սարգիս Վ., որոյ ժրջան հոգածու աշխատութեամբ, հանդերձ պշխատակից միաբան եղբարց օգնականութեամբ կարողացան այսչափ շինուածոց կառուցումն յառաջ տանիլ, որոյ փառքն եւ պատիւ հաւասար է բոլոր միաբանական դասուն: Նմանապէս պարտաւոր կացուցանեմ Սեւանայ վանաց համայն միաբանութիւնն յօժարասիրտ հոգով հպատակիլ այն կարգադրութեան եւ վարել ըստ այնմ ի նոր տաւոյս սկզբէն:

Եթէ ոմանք զժկամակ լինին ես յուշածեմ նոցա Բրիտանոսի բան, որ պատուէ՞ր ետ մեզ չլինել բազմախնդիր յաղօթելն մեր, իբրեւ հեթանոս, զի դիտէ Հայրն Ձեր, թէ զինչ պիտոյ է Ձեզ եւ աստի նիւթ առնելով Մանդակունի Ս. Հայրապետն որչափ զեղեցիկ յօրինեալ է զինդրուածս աղօթից «Տէր, դու զիտես զպէտս եւ զկարիս մեր առաւել քան զոր խնդրեմք եւ իմանամք»: Ամենայն ուշադրութեան արժանի է Եզնկայ վարդապետի խրատ, զոր ուղղէ առ միանձուես, «բերանք մեր հոտեալ են ի պահոց եւ լեզուք մեր ընդարմացեալ ի սաղմոսերգութիւն եւ զոր Աստուած խնդրէ զայն ոչ ունիմք, այն է սէր եւ միաբանական եղբայրասիրութիւն»: Աստի յայտնի է, թէ ի ժամանակս իւր կային վանական միաբանք եւ միաձուռնք, որք թողեալ զմիաբանական սիրոյ սուրբ պատուէր, անբուն տքնութեամբ յաճախէին յաղօթս եւ մերթ եւս պարծենային ի վերայ միմեանց իբրեւ առաւել հանդիսացեալ ի հոգեւորական վարս:

Եւ ես աղօթեմ վասն ձեր եւ դուք վասն իմ առ ի չլինել մեզ առանց սիրոյ աղօթարար: Այլ առաւել ունել սէր եւ սիրել եղբարց առանց երբեք կեղծաւորութեան: Գլուխ ամենայն պատուիրանաց սէր է, զոր աւանդէ մեզ սուրբ Աւետարան:

Երանելի լինիմք եթէ պինդ պահելով զայս տէրունի սրբազան պատուէր, զկեանս

վարեսցուք այնպէս, որպէս հաճոյ է առաջի Տեառն, քան զպատարազ եւ զզոհ: Մաղթեմ զի վանական ուխտ Սեւանայ ունելով ժամանակ պարապոյ, այսուհետեւ ոչ միայն կրթեալ զանձն իւր յաստուածապաշտութիւն, այլ լծորդեսցէ ընդ այն զուսումն եւ զկրթութիւն, որով միայն փառաւորի նա յԱստուծոյ եւ ի մարդկանէ:

Շնորհատուն Աստուած տացէ Ձեզ շնորհ, զի դուք կարող լինիլիք հետզհետէ ի լաւ անդր յառաջադիմել եւ գովելի աւուսմբ հոչակել զուխտն Սեւանայ վանաց, ուր երբեմն Մաշտոց վարդապետ հանդիսացեալ էր իմաստութեամբ եւ զիտութեամբ: Եթէ դուք համարիք զայն պարծանք Սեւանայ վանաց, ուրեմն նախանձաւոր եւ հետեւող լերուք շնորհաց նորին: Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ Ձեզ ընդ ամենեսինդ»:

Սեւանայ մենաստանի հիմնադրի՝ Մաշտոց խնկելի հայրապետի յուզիչ օրինակով է կնքում Հայրիկը իւր կոնդակը. ուսման ու աղօթքի աննման միացումով մենաստանը վերածնելու քարոզն է տալիս միաբանութեան, որը խորը անտարբերութիւն ցոյց տուեց զէպ ի այդ քարոզը ու քահանայրդ դարու շէմքին Սեւանայ անապատը կնքեց իւր անապատական կենցաղը:

Գեղարքունեաց երբեմնի աղօթաւոր, ուսումնասէր աշխարհի անապատները հետզհետէ հանգել մարել էին ու Սեւանայ զեղածիժաղ լճի ափին վառուող աղօթարան ճրագները հանգել. մնացել էր Սեւանը եւ նա էլ թառամեց, թօշնեց իբր անապատ, մնալով լոկ ուխտատեղի, պատմական վայր Գեղարքունեաց աշխարհի:

Գեղեցիկ զուգադիպութեամբ տաղանդաւոր զրոզ Շանթը իւր «Հին Աստուածներ» զրամայում կարծես կրօնական կեանքի անկման զեղեցիկ նկարագիրն է տալիս իւր նիւթն առնելով Սեւանայ մենաստանի պատմութիւնից: Սեւանայ անապատի հիմնադիր, զրամայի կենդրոնական անձ, Մաշտոց հայրապետի-վանահօր բերանով քննադատելով այն եկեղեցին, որը կայ այժմ: Մի կողմից հնի անկումն, միւս կողմից նորի վերածնութիւնը այնտեղ ու այն մարդու բերանով, որ Թ.—Ժ. դարուն, մեզնից 1000 տարից առաջ ուժեղ վերածնութեան հիմքն է դրել:

Ահա այդ իմաստալի քարոզը հնի անկման եւ նորի վերածնութեան: Վանահայրն ասում է վանականներին.

«Մենք բոլորս ալ, որ թողեր ենք աշխարհը ու եկեր անապատ, մեր հոգիին խորքը ու եկեր կտոր աշխարհ էինք բերեր խորքը դեռ մէկ կտոր աշխարհ կամ մեզի հետ: Ներքին վայելելի ծածուկ կարօտ մը, քոզարկուած հաճոյքների բարակ ծարաւ մը, մեր անցած կեանքի, կոռւի ու ծարաւ մը, մեր անցած կեանքի, կոռւի ու յուզումներու ամբողջ նուրբ ու կայուն ցանց մը եւ ակամայ վերջուշներ: Այս բոլորը դեռ մեզի հետ էր, երբ այս եկեղեցին կը շէմեզի հետ էր, երբ այս եկեղեցին կը շէմեզի հետ էր: Այդ ծածուկ քոզարկուած յուզումնէնք: Այդ ծածուկ քոզարկուած յուզումնէնք են շիներ այս եկեղեցին. աշխարհէն ներս են շիներ այս եկեղեցին սպրդած անապատ եկած, մեզի հետ ներս սպրդած աշխարհի այդ կտորն է շիներ այս եկեղեցին: Աշխարհինն է այդ եկեղեցին, մեր ցին: Աշխարհինն է այդ եկեղեցին տակ Աստուծունը չէ: Աստուծունը չէնք կրնար, այդ մենք այլեւս աղօթել չենք կրնար, այդ կամարները պէտք է քանդուին: Մարդս ինք կամարները պէտք է քանդուին: Մարդս ինք միայն կրնայ շինել իր Աստուծուն նուրբ ուսման տաճարը, իր մէջըսով, ձեռքերով, իր խելով: Թէ ինչ ձեւ է ունենալու մեր նոր եկեղեցին, դեռ ես ինքս ալ որոշ չգիտեմ. ա՛յ կը նստինք միասին ու կը խորհինք. կը խորհինք ու կը ստեղծենք»:

(Շարունակելի...) Գրիգ. Եղիշուհոս



Ծ Ա Ն Օ Թ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ք
Ս Տ Ա Մ Պ Օ Լ Ո Յ Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ե Ն Ն
Ե Ր Ե Մ Ի Ե Չ Է Լ Ե Պ Ի Բ Ե Օ Մ Ի Ի Բ Ե Ա Ն

Գ Լ Ո Ւ Խ Զ .
(Շարունակելի...)

Բանկայթի Ազգ. Գերեզմանատունը շատ հին է. անոր սկիզբը մթութեամբ ծածկուած է թէ Կ. Պոլսոյ առաջին (1453) առաջ հոն կը թաղուէին Հայեր, ուսմէն (1453) առաջ հոն կը թաղուէին Հայեր, քանի որ տեսնուք (էջ 484—485) թէ 1477 դարու մէջ զալաթիա ունէր հայ եկեղեցի մը:

37 Լ. Շանթ, «Հին Աստուածներ», 114—115: